



ՈՐՈՇՈՒՄ N 14

14 ապրիլի 2021 թվականի

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՏԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 3-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 3-րդ ենթակետով, լսելով 2019-2020 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության վերաբերյալ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գրիգորի Գևորգյանի հաշվետվությունը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ 2019-2020 ուսումնական տարվա ընթացքում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի հաշվետվությանը:

2. Հավանություն տալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով 2019-2020 ուստարում նախատեսված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի հաշվետվությանը:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019-2020 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար: